«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի
պարտականությունները կատարող՝
_____Ա. Ռ. Նուշիկյան
«11», «մայիս» 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԱՆԻ ՍՊԱՐՏԱԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության:

Անի Սպարտակի Նազարյանի թեկնածուական ատենախոսությունը վերաբերվում է «Սոցիալական հոգեբանություն» ԺԹ.00.03 մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի ու փոփոխությունների հիմնահարցերին:

Սույն ատենախոսության արդիականությունը պայմանավորված է սոցիալական կարծրատիպերի՝ իբրև հասարակության զարգացման ներկա փուլում անհատական և խմբային գիտակցության կարևորագույն բաղադրիչ հանդիսանալու փաստով: Սոցիալական կարծրատիպերը՝ իբրև կայուն և անփոփոխ սոցիալ-հոգեբանական զարգացումներ դեռևս խորքային ու բազմաբովանդակ ուսումնասիրության չեն ենթարկվել:

Փաստենք նաև, որ սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի փոխհարաբերակցության ու փոխպայմանավորվածության հիմախնդիրը կարիք ունի ծավալուն լուսաբանման և նորովի մեկնաբանության: Կասկած չի հարուցում, որ անձնային աճի՝ իբրև բարդ հոգեբանական ֆենոմենի վերաբերյալ ուսումնասիրությունների դեռևս ամբողջությամբ լուսաբանված չէ և մինչ օրս նույնիսկ գոյություն չունի հիմնախնդրի վերաբերյալ ամբողջական և համապարփակ սահմանում, ինչը կներկայացնի վերջինիս էությունը, բնութագրիչները և մասնավորապես՝ սոցիալական կարծրատիպերի վրա նրա ունեցած ազդեցությունը:

Ուստի սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համալիր ուսումնասիրությունը՝ կապված այս երկու հոգեբանական կազմավորումների փոխկապակցվածության, սոցիալական կարծրատիպերի շարժընթացի վրա անձնային աճի ազդեցության հետ, առաջնային խնդիր է, մասնավորապես՝ համահարաբերակցության բացահայտման համատեքստում:

Հիմնախնդրի ուսումնասիրության այս ենթատեքստով էլ հիմնավորվում է սույն թեմայի արդիականությունը:

Հենց այս տեսանկյուններից էլ ատենախոսն անդրադարձել է առաջադրած հիմնախնդրին՝ նպատակ հետապնդելով հետազոտական ճանապարհով և արդյունքների վերլուծությամբ վեր հանել սոցիալական կարծրատեպերի ու անձնային աճի փոխկապակցվածությունն ու փոխպայմանավորվածությունը՝ իր առջև խնդիր դնելով սոցիալական կարծրատեպերի, և անձնային աճի փոխհարաբերակցության բացահայտումը:

Յուրատիպ է ատենախոսի վարկածն այն մասին, որ սոցիալական կարծրատեպերի և անձնային աճի միջև առկա է հակադարձ համեմատական կապ, համաձայն որի՝ անձնային աճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց նվազում է սոցիալական կարծրատիպերի արտահայտվածության մակարդակը: Անշուշտ, ատենախոսությունը պատրաստվել է տեսական-գիտական հսկայածավալ գրականության վերլուծության, լայնածավալ փորձարարական հետազոտության արդյունքում, ինչի շնոլորիվ բացահայտվել է անձի սեռադերային, տարիքային, մասնագիտական կարծրատիպերի արտահայտվածության մակարդակը, ուսումնասիրվել են հետազոտվողների անձնային աճի շարժընթացը, անձնային աճի ազդեցությունը սոցիալական կարծրատիպերի վրա:

Անհրաժեշտ է փաստել, որ ատենախոսը, վերլուծելով հոգեբանական գիտական գրականության մեջ սոցիալական կարծրատիպերի վերաբերյալ առկա բազմաթիվ բնորոշումների և մոտեցումների վրա, սույն ատենախոսության շրջանակներում ներկայացրել է սոցիալական կարծրատիպերի սեփական բնութագրումն. այն է՝ ընդհանրացված, հարաբերականորեն կայուն, հուզականորեն հագեցած պատկերացումներ անհատական, խմբային և հասարակական գիտակցության մեջ, որոնք առաջ են գալիս սոցիալական փոխազդեցության արդյունքում և որոշում են մարդկանց կամ սոցիալական խմբերի վերաբերմունքը որոշակի սոցիալական առարկաների, երևույթների և իրադրությունների հանդեպ:

Հատկանշական է, որ սույն ատենախոսության շրջանակում ատենախոսը տվել է նաև անձնային աճի և վերջինիս բնութագրիչների բնորոշումը. այն է՝ անձի կողմից իր անձնային ներուժի և սոցիալապես նշանակալի անձնային հատկանիշների գիտակցման, ճանաչման և կատարելագործման գործընթաց, որը տեղի է ունենում որոշակի արտաքին և ներքին գործոնների ներգործությամբ և ապահովում է անձի լիարժեք կենսագործունեությունն ու ինքնիրացումը, բնութագրիչները՝ բարձր ստեղծագործականությունը, ստեղծարարությունը, ինքնաճանաչման և ինքնազարգացման ձգտումը, արժեքային կողմնորոշումների հստակ գիտակցումը, սերը և հարգանքը սեփական անձի և այլոց հանդեպ, զգացմունքների, մտքերի անկեղծությունը, ինքնաբուխությունը, ինքնավստահությունը, ինքնուրույնությունը, հանդուրժողականության բարձր մակարդակը, ինքնադրսևորվելու, սեփական տաղանդը, կարողությունները, հմտությունները առավելագույնս դրսևորելու

ունակությունը, կյանքի բոլոր ոլորտներում ներդաշնակ հարաբերություններ հաստատելու կարողությունը:

Սեփական բնորոշումները ներկայացնելու համար հիմք է ծառայել ատենախոսի իրականացրած հետազոտությունը՝ փուլային ստորակարգությամբ՝ իրականացված երեք փուլով 257 անձանց շրջանում: Ողջ մեթոդական ապարատի գործիքակազմը հուսալի է, նրա կիրառելությամբ հետազոտությունը՝ արժանահավատ:

Հետազոտության արդյունքների վերլուծության նպատակով կիրառվել են մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ, արդյունքների հավաստիությունը ստուգվել է համապատասխան վիճակագրական ծրագրերի միջոցով, հաստատվել են ստացված տվյալների վիճակագրորեն նշանակալի կապերի հավասատիությունը:

Ատենախոսի կողմից ուսումնասիրվել են սոցիալական կարծրատիպերի սեռադերային, տարիքային և մասնագիտական կարծրատիպերը, որոնց ընտրությունը պայմանավորված է առավել տարածվածության և կիրառելիության հանգամանքով: Իրականացված բավականաչափ ծավալուն փորձարարական հետազոտությունը ներառել է 20-50 տարեկան ընդհանուր թվով 257 անձի, իսկ տարիքային շեմի ընտրությունը ըստ ատենախոսի պայմանավորված է եղել հետազոտության մեթոդաբանական հիմքով և հիմնավորված է Շ. Բյուլերի կողմից առաջ քաշված անձնային աճի տարիքային առանձնահատկությունների և կառուցվածքային բաղադրիչների տեսամեթոդաբանական փաստերով: Հետազոտությունը հետաքրքրական ու յուրօրինակ արդյունքներ է արձանագրել, նախևառաջ այն առումով, որ անձնային աճի դրսևորման մակարդակի և անձի սոցիալական կարծրատիպերի արտահայտվածության միջև գոյություն ունի հակադարձ համահարաբերակցական կապ, այն է՝ անձնային աճի բարձր մակարդակի դեպքում դիտվում է կարծրատիպերի ցածր մակարդակ: Հետազոտության շնորհիվ պարզվել է, որ անձնային աճի խթանման արդյունքում դիտվում է կարծրատիպերի արտահայտվածության մակարդակի նվազում կամ դրանց լիովին կազմալուծում. սոցիալական կարծրատիպերի շարժընթացի ինտենսիվությունը պայմանավորված է կարծրատիպի տեսակով:

Հետազոտությունների արդյունքում հետաքրքրական բացահայտում է կատարվել առ այն, որ անձնային աճի խթանման արդյունքում առավել ակնառու փոփոխությունների են ենթարկվում սեռադերային կարծրատիպերը: Նկատելի արդյունք է գրանցվել նաև տարիքային կարծրատիպերի շարժի առումով, ինչը անձնային աճի խթանման համատեքստում ևս նկատելի է:

Եվս մեկ հետաքրքրական արդյունք, այն մասին, որ անձնային աճի խթանմանը զուգընթաց ամենանվազ փոփոխությունների ենթարկվում են մասնագիտական կարծրատիպերը: Նմանօրինակ մոտեցումը և առաջադրված հիմնախնդիրների փոխկապվածության ու փոխպայմանավորվածության առկայության վերհանումը նոր խոսք և նորովի մոտեցում է սոցիալական հոգեբանության գիտակարգում, մասնավորապես այն, որ սոցիալական կարծրատիպերը դիտարկվել են անձնային

աճի համատեքստում՝ ակցենտուացնելով անձնային աճի և սոցիալական կարծրատիպերի փոխպայմանավորվածությունը, անձնային աճի խթանման ազդեցությունը սոցիալական կարծրատիպերի շարժընթացի վրա:

Ատենախոսության հիմքում դրված են հայերեն և օտարալեզու թվով 172 մասնագիտական աղբյուր: Աշխատանքը գրված է գրագետ, ահպանված են գիտական գրավոր խոսքին հատուկ արտահայտչամիջոցները:

Ծավալուն և բազմաբնույթ վերլուծությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է լուծել հետազոտությունում առաջադրված հիմնական խնդիրները և հանգել կոնկրետ ու հստակ եզրակացությունների, որոնք ներկայացնում են ատենախոսության պաշտպանությանը առաջադրվող հիմնական դրույթների պահանջները, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթները:

Որպես հետազոտական աշխատանք առկա են որոշ թերություններ ու բացթողումներ, որոնց պարզաբանումը կբարձրացնի ատենախոսության գիտամեթոդական արժեքը և կարևորում ենք ատենախոսի կարծիքն ու մեկնաբանությունները: Դրանց թվին են դասվում"

1. **էջ 7: «Երկրորդ փուլում** (2014-2015 թթ.) իրականացվել է հավաստող գիտափորձը, մշակվել են արդյունքները: **Երրորդ փուլում** (2014-2015 թթ.) շարադրվել և ամփոփվել են հետազոտության արդյունքները»:

Դիտարկում՝ Մեկնաբանման կարիք ունի փու լե րի բա ժան ման տրա մա բա նու թյու նը: Սովորաբար գիտական հետազոտության ընթացքը բաժանվում է փուլերի՝ ըստ տարբեր ժամանակագրական շրջանների: Այս աշխատանքում երկրորդ և երրորդ փուլերի իրականացման աշխատանքները անհասկանալի կերպով ներկայացված են միաժամանակ, չնայած որ դրանց բացատրությունը ենթադրում է, որ պետք է հաջորդեին մեկը մյուսին:

2. **էջ 116:** r=-0,1; -0.3

   r=-0,3: -,05

Դիտարկում՝ Մեկնաբանման կարիք ունի այն, որ ատենախոսը նույն միջակայքի ցուցանիշը՝ -0,3-ը, վերլուծում է միաժամանակ և որպես թույլ, և որպես միջին բացասական կապի ցուցանիշ:

Բացակայում է նաև կորելացիոն կապի որակական հստակ բնութագրումը:

3. **էջ 127**: Գծապատկեր 20 և **էջ 129**: Եզրակացության 6 կետ:

Դիտարկում՝ Գծապատկեր 20-ում երևում է, որ վարժանքից հետո գրանցվել են հետևյալ ցուցանիշները՝

սեռադերային կարծրատիպերը 33.5

տարիքային կարծրատիպերը 33,6

մասնագիտական կարծրատիպերը 34,2

Ցուցանիշների տարբերությունները բավական փոքր են: Մեկնաբանման կարիք ունի այն հանգամանքը, թե ինչն է հիմք տվել ատենախոսին եզրակացության 6-րդ կետի հիմավորման համար:

Նշված անճշտություններն ու թերությունները չեն նսեմացնում գիտական հետազոտության արժեքը, դրանք կարելի է ընդունել որպես ցանկություններ և առաջարկներ:

Ատենախոսությունը կատարված է բարձր գիտամեթոդական մակարդակով ներկայացնում է տեսական և գործնական նշանակություն: Այն ավարտուն է, շարադարված է գարգետ գիտամեթոդական ոճով, պահպանված է ուսումնասիրված նյութերի սոցիալ հոգեբանական տրամաբանական կապերը, հստակ ներկայացված են հետազոտության բովանդակությունն ու արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այդուհանդերձ, վերոնշյալ թերությունները չեն ազդում Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» թեմայով ատենախոսության գիտականության վրա և չեն նսեմացնում ամբողջ աշխատանքի գիտական արժեքը:

Կարևոր է նշել, որ աշխատանքի արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ նշանակություն: Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» թեմայով ատենախոսությունը ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ինքնուրույն, գիտական բարձր մակարդակով գրված աշխատանք է:

Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Աշխատանքի հեղինակը՝ Անի Նազարյանը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Ա. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 10.05.2023թ նիստում (արձանագրություն թիվ 13), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Դավթյանը, մ.գ.թ.,

դոցենտ Թ. Յու. Ազատյանը, դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Մ.Գ. Ավետիսյանը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտի
Ա. Լալայանի անվ. Սպորտի
մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր **Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ**

Հաստատում եմ՝ հ.գ.թ., պրոֆեսոր
Հ.Ա. Բաբայանի ստորագրությունը

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտի
գիտական քարտուղար՝ մ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**

«11», «մայիսի» 2023թ